

**«Հայաստան ծառատունկ ծրագիր» կազմակերպությունը տարածում է Թեղուտի անտառը փրկելու հրատապ գործողությունների կոչ-հաղորդագրությունը**

Հայաստանի հյուսիսում գտնվող Թեղուտ գյուղը՝ իր կուսական անտառներով և հարուստ էկոհամակարգով, տուն է հանդիսանում թռչունների, կաթնասունների, սողունների, ձկների և բույսերի հարյուրավոր տեսակների համար, որոնցից շատերը գրանցված են վտանգի ենթարկված տեսակների Միջազգային կարմիր գրքում:

«Արմենիան Քափրր Փրոգրամ» («Էյ-Սի-Փի») ՓԲԸ նախատեսել է ամբողջությամբ ծառահատել այդ անտառի 1,500 ակր տարածքը՝ նպատակ ունենալով պղնձի և մոլիբդենի արդյունահանման համար բաց տիպի հորանցքեր փորելու գործունեություն ծավալել այդ տարածքում: Բացի այդ, «Էյ-Սի-Փի»-ն ծրագրել է մոտակայքում գտնվող կիրճում ստեղծել «Հանքամնացուկների պահեստարան» (պոչամբար), որից հողի տակ կթափանցեն և կիրճով հոսող գետի մեջ կթափվեն ծանր մետաղներ և այլ թունաքիմիկատներ՝ վերջնականապես աղտոտելով ջրամատակարար պաշարները:

Երկու տարի առաջ «Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամը (ՀԾԾ) և մի շարք այլ կազմակերպություններ և անհատներ համագործակցել են Հայաստանի հարավում ոչ նչացման եզրին հայտնված Շիկահողի բնական անտառային արգելանոցը փրկելու ուղղությամբ: Իսկ այժմ կազմակերպությունը միանում է Հայաստանի և Սփյուռքի բնապահպաններին և ընկերներին՝ Թեղուտի անտառը փրկելու նպատակով:

Հունիսի 20-ին ՀԾԾ-ն էլեկտրոնային հրատապ փոստային հաղորդագրության միջոցով դիմել է իր հազարավոր աջակիցներին ու գործընկերներին՝ դրդելով նրանց հանքարդյունաբերական ընկերության ձեռքերով ազգային գանձը

ոչ նչացումից փրկելու համոզիչ հայտարարությամբ նամակներ հղել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

«Ի՞նչ տեղեկություններ մենք ունենք «Արմենիան Քափրր Փրոգրամ» («Էյ-Սի-Փի») ՓԲԸ նվաճումների մասին: «Էյ-Սի-Փի»-ին է պատկանում Ալավերդու պղնձաձուլական գործարանը, որը պղնձաքար է մշակում տարածաշրջանի հանքարդյունաբերական ընկերությունների հոլդինգի համար», - հաստատում է «Հայաստան ծառատունկ ծրագրի» Գործադիր տնօրեն Ջեֆ Մասարջյանը: «Ալավերդու հալոցային վառարանը, որը հայտնի է տարեկան հազարավոր տոննա ծծմբաօքսիդ մթնոլորտ արտանետմամբ, քայքայիչ ազդեցություն է գործում տեղական բնակչության առողջության և բարեկեցության վրա»:

1990-ական թթ-ի վերջին գործարանի վերաբացման հետ մեկտեղ Ալավերդի քաղաքում գրանցվել է ռեսպիրատոր հիվանդությունների, անպտղաբերության և բնածին արատների կտրուկ աճ: Հալոցային վառարանը չունի բացթողումները կառավարող սարքեր, որոնց տեղադրումը, ինչպես հայտնում է ընկերությունը, մատչելի չէ:

Թեղուտի հանքի զարգացմանն ու շահագործմանը ուղղված «Էյ-Սի-Փի»-ի նախնական պլանները հավանության են արժանացել ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից՝ չնայած այն փաստի, որ կոչնչացվի Հայաստանի ամենաարժեքավոր բնության տեսավայրերից մեկը և կծառահատվի մի ամբողջ անտառ: Եվ այդ ամենը այն պարագայում, երբ հայ ազգին պատկանող ներկայիս անտառածածկ տարածքները ութ տոկոսից էլ նվազ են:

«Հայաստան ծառատունկ ծրագիրը» հանդիսանում է SOS-Թեղուտ կոնսորցիումի անդամ որի կազմում են 26 կազմակերպություններ: Բոլոր կազմակերպությունները սատարում են երկրի կայուն տնտեսական զարգացման անհրաժեշտության գաղափարը, սակայն դեմ են երկրի այնպիսի զարգացմանը, որի արդյունքում մենք կունենանք միայն անժամ քայքայված և թունավորված

Հող», - շարունակում է պ-ն Մասարջյանը: « «Էյ-Սի-Փի»-ն պնդում է, որ Հանքը շահագործելու դիմաց ՀՀ կառավարությունը տարեկան կունենա 8 միլիոն ԱՄՆ դոլար մուտք պետ. բյուջե՝ Հարկերի և այլ վճարների տեսքով: Սակայն, մի՞թե մենք պատրաստ ենք թույլ տալ, որ կարճաժամկետ տնտեսական շահ ստանալու ակնկալիքով ոչ նչացվի Հայաստանի Հիասքանչ անտառը, աղտոտվեն շրջապատող գետերն և առվակները, ինչպես նաև թունավորվեն Հանքին կից գյուղատնտեսական նշանակության Հողերը»:

«Թեղուտի անտառը բնաջնջելու փոխարեն մենք առաջարկում են ընդգրկել այն Հատուկ պահպանվող բնական տարածքների շարքում որպես կիրճում կայուն զբոսաշրջություն զարգացնելու համաձայնեցված ջանքերով իրականացվելիք ծրագրի մի մաս: Զբոսաշրջությունը՝ կայուն տնտեսական զարգացման մի ձև է, որը շահավետ է տեղական բնակչության համար և մշտական վնաս չի հասցնում շրջակա միջավայրին: Թեղուտ ամբողջ աշխարհից կարող են այցելել այն անձինք, ովքեր ցանկություն կունենան տեսնելու այդ շրջանի բացառիկ Հարուստ բնապատկերները, կենսաբանական բազմազանությունն ու մշակութային ժառանգությունը», - եզրակացնում է պ-ն Մասարջյանը՝ դիմելով ողջ Հասարակայնությանը:

Հրատապ կոչ-Հաղորդագրությունը տեսնելու կամ նախագահ պ-ն Քոչարյանին Թեղուտի անտառը պաշտպանելու խնդրանքով նամակներ ուղարկելու նպատակով՝ այցելեք «Հայաստան ծառատունկ ծրագիր» Հիմնադրամի վեբ-կայքը [www.ArmeniaTree.org](http://www.ArmeniaTree.org) Հասցեով: